**Արձանագրություն N 2**
**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան — 25 դեկտեմբերի 2024թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Բադալյանը, Ռ. Գաբրիելյանը, Ս. Ալեքսանյանը, և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ա. Սարգսյան:

**Հայտերի բացման վերաբերյալ**

Ջրային կոմիտեի կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների

| | |
|---|---|
| 1 | **Գետափ-Եղեգնաձոր II կարգի ջրանցքի 700 մ (ՊԿ31+00-ՊԿ37+60) հատվածի վերանորոգում** |
| 2 | **Յաղդանի պոմպակայանի (Յաղդան բնակավայր) վերականգնում** |
| 3 | **Հերմոն-Ելփին ինքնահոս ջրատարի Ռինդ-Արենի տաղամաս ջրատարի 300 մ (ՊԿ12+50-ՊԿ15+50) հատվածի հիմնանորոգում** |

**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ** ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2024 թվականի դեկտեմբերի 09-ին, ժամը 16:00-ին /հրապարակվել է 02.12.2024թ.:

**Հրավերում կատարված փոփոխություններ**

**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ** ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

| Մասնակցի անվանումը | հասցե, հեռախոսահամար | Էլեկտրոնային հասցե |
|---|---|---|
| «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ»ՍՊԸ «ՇԻՆԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԳՏԿ» ՍՊԸ կոնսորցիումը | ՀՀ Շ/Մ գ. Ախուրյան Հ Շահբազյան 10 տ. հեռ. 098-41-02-71 | livalcontrol@mail.ru |
| «Գրիտիգ» ՍՊԸ | Արարատի մարզ գ. Ոստան Թեհլերյան 14 հեռ. 043-60-00-90 | gritig@inbox.ru |

**Մասնակցի (ների) գնային առաջարկը**

ՀՀ դրամ

| | Մասնակցի անվանումը | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| | **Չափաբաժին 1**<br>**Գնման գին – 799 602 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**<br>տեխնիկական հսկողության ծառայություններ Գետափ-Եղեգնաձոր II կարգի ջրանցքի 700 մ (ՊԿ31+00-ՊԿ37+60) հատվածի վերանորոգում | | | |
| 1 | «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ»ՍՊԸ «ՇԻՆԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԳՏԿ» ՍՊԸ կոնսորցիումը | 499 000 | 99 800 | 598 800 |
| 2 | «Գրիտիգ» ՍՊԸ | 790 000 | - | 790 000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Չափաբաժին 2**<br>**Գնման գին – 1 135 629 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**<br>տեխնիկական հսկողության ծառայություններ Յաղդանի պոմպակայանի (Յաղդան բնակավայր) վերականգնում | | | | |
| 1 | «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ»ՍՊԸ «ՇԻՆԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԳՏԿ» ՍՊԸ կոնսորցիումը | 662 000 | 132 400 | 794 400 |
| **Չափաբաժին 3**<br>**Գնման գին – 719 988 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)**<br>տեխնիկական հսկողության ծառայություններ Հերմոն-Ելփին ինքնահոս ջրատարի Ռինդ-Արենի տաղամաս ջրատարի 300 մ (ՊԿ12+50-ՊԿ15+50) հատվածի հիմնանորոգում | | | | |
| 1 | «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ»ՍՊԸ «ՇԻՆԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԳՏԿ» ՍՊԸ կոնսորցիումը | 419 000 | 83 800 | 502 800 |
| 2 | «Գրիտիգ» ՍՊԸ | 710 000 | - | 710 000 |

**Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դրանց համապատասխանությունը հրավերի պահանջներին**

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ ծածկագրով ընթացակարգի՝ Armeps համակարգում

Մասնակից «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ «ՇԻՆԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԳՏԿ» ՍՊԸ կոնսորցիումը

«ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ հավելված N 2» լրացրել է հրավերի պահանջներին անհամապատասխան (Հրավերի ծածկագիրը սխալ է լրացված),

«Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է

- (Չափաբաժին 1 և 3) Հրավերով պահանջվող լիցենզիայի ներդիրը այն է՝ «Հիդրոտեխնիկական կառուցվածքներ (հիդրոտեխնիկական համակարգեր, հիդրոէներգետիկ կառույցներ) ներդիր (ներդիրի ծածկագիրը՝ 07):»

- <<Աշխատանքային ռեսուրսներ>> որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը՝ Հավելված 3-ը ինչպես նաև կից փաստաթղթերը՝ աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին՝ բնօրինակից արտատպված, մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր և այլն) պատճենները, անձնագրերի պատճենները:

**Հանձնաժողովի որոշումը**

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. 20.12.2024թ. հրավիրված գնահատող հանձնաժողովի նիստի արդյունքներով՝

ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովի որոշումը.

Համաձայն Հրավերի 8.9 և 8.10 կետերի՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը՝ առաջարկելով մասնակից «Գրիտիգ» ՍՊԸ-ին (1-ին և 3-րդ չափաբաժինների մասով), մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 23.12.2024թ. ներառյալ շտկել արձանագրված անհամապատասխանությունները

Սահմանված ժամկետում «Գրիտիգ» ՍՊԸ-ն շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, սակայն ներկայացված տեղեկատվությունը չի **(Համլետ Կարապետյան-որակավորումը հաստատող փաստաթուղթը ներկայացված է սահմանված կարգի խախտմամբ)** ներկայացվել Հրավերի 8.18 կետին համապատասխան, այն է՝ «Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

**Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:»**

**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.**

1. Հիմք ընդունելով Հրավերի 8.2 կետը՝ այն է «...Ընդ որում հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկները և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 8.9 կետով սահմանված դեպքի» մասնակից «ԼԻՎԱԼ ՔՈՆԹՐՈԼ» ՍՊԸ «ՇԻՆԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ԳՏԿ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը մերժել:

2. Մերժել նաև «Գրիտիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ Հրավերի պահանջներին անհամապատասխան հայտ ներկայացվելու հիմքով:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին) ՋԿ-ԳՀԽԾՁԲ-24/8-Տ ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, 400 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| **Նախագահ** | ______________ | Ա. Սիմոնյան |
| **անդամներ** | ______________ | Է. Բադալյան |
| | ______________ | Ռ. Գաբրելյան |
| | ______________ | Ս. Ալեքսանյան |
| | ______________ | Ս. Աբազյան |
| **Քարտուղար** | ______________ | Ա. Սարգսյան |